ՀՀ, ք. Երևան
25.04.2025թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀՀ ԱՆ «ԴԱՏԱԲԺՇԿԱԿԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ

ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ԳՀԾՁԲ-2023/2-ԴԲԳԳԿ ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 03.11.2023 թվականին կնքվել է Նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության անցկացման և եզրակացության տրամադրման ծառայությունների մատուցման N ԳՀԾՁԲ-2023/2-ԴԲԳԳԿ գնման պայմանագիրը (այսուհետ նաև՝ «Պայմանագիր»): Պայմանագրի շրջանակներում «Գրանդ Քնթրոլ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ «Կատարող») ստանձնել էր պայմանագրի Հավելված N 1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 1-ին և 2-րդ չափաբաժիններով նախատեսված ծառայությունները մատուցելու պարտականությունը՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 30 (երեսուն) օրացուցային օրվա ընթացքում: Սակայն Կատարողը մինչ օրս չի մատուցել նշված ծառայությունները, ինչը հանդիսանում է ծառայությունների մատուցման ժամկետի խախտում և Պայմանագրի 2.1.3 կետի բ) ենթակետի համաձայն պայմանագրի միակողմանի լուծման հիմք:

Առաջնորդվելով Պայմանագրի 2.1.3 կետի բ) ենթակետով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետի պահանջներով՝ 2025 թվականի ապրիլի 14-ին Կատարողին ուղարկվել է Պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցում և առաջարկվել է 10 (տասը) օրվա ընթացքում վճարել պայմանագրի (112.500 (մեկ հարյուր տասնեկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամի չափով) և որակավորման (168.750 (մեկ հարյուր վաթսունութ հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամի չափով) ապահովումները ՀՀ ԱՆ «Դատաբժշկական Գիտագործնական Կենտրոն» ՊՈԱԿ-ի 900018001975 հաշվեհամարին, սակայն վերոնշյալ ժամկետում վճարում չի իրականացվել: Այսպիսով, «Գրանդ Քնթրոլ» ՍՊԸ խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը և մասնակիցը սահմանված ժամկետում չի վճարել պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետով, ինչպես նաև նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. «Գրանդ Քնթրոլ» ՍՊԸ -ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար հիմքերը գնահատել բավարար:

2. «Գրանդ Քնթրոլ» ՍՊԸ -ի տվյալները համապատասխան հիմքերով գրավոր ուղարկել լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

3. Ստորև ներկայացվում է «Գրանդ Քնթրոլ» ՍՊԸ-ի տվյալները՝ համաձայն սահմանված ձևաչափի:

Մասնակցի						
անվանումը	ՀՎՀՀ/ ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
«Գրանդ Քնթրոլ» ՍՊԸ	05540953	ՀՀ, ք. Արթիկ, Չարենցի 12		v		ԳՀԾՁԲ-2023/2-ԴԲԳԳԿ

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ**